



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 նոյեմբերի 2017 թվականի N 264-Ա

### 2017 ԹՎԱԿԱՆԻ ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 1386-Ն որոշման 7-րդ կետի դրույթների՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Նահապետյանին՝ անցկացնել Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Ստեղծել զորակոչային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա. Նահապետյան նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ,

2) Կ. Մանուկյան անդամ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետ, ոստիկանության մայոր,

3) Գ. Հայրապետյան անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

4) Վ. Սարգսյան անդամ, ավագ բժիշկ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության թերապևտ:

3. Հաստատել զորակոչիկների բժշկական քննություն անցկացնելու հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Վ. Սարգսյան թերապևտ, ավագ բժիշկ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,



2) Ռ. Մկրտչյան վիրաբույժ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

3) Ա. Ավետիսյան ակնաբույժ «Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

4) Դ. Ղամբարյան քիթ-կոկորդ-ականջաբան «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

5) Հ. Կարապետյան նյարդաբան «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

6) Լ. Հովհաննիսյան սրտաբան «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերություն,

7) Ա. Մանուկյան հոգեբույժ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

8) Ա. Կառավարիցյան մաշկավեներաբան «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

9) Ս. Օհանջանյան բուժքույր «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն:

4. Զորակոչիկների և զինծառայողների ընտանեկան և նյութական պայմանների ստուգման և քննման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա. Կողարաշյան նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ, մայոր,

2) Գ. Հայրապետյան անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

3) Համայնքի ղեկավար ըստ բնակավայրի:

5. Բժշկական քննություններ անցկացնող հանձնաժողովի անդամների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման պահանջների համաձայն:

6. Մարզի բժշկական կենտրոններում զորակոչային տարիքի անձանց բժշկական քննություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն:

7. «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Նազարյանին՝

1) Ժամանակին կազմակերպել այն պատահիների հետազոտումը և բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են հետազոտման կամ բուժման,

2) բժշկական հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և ղեղորայքով:

8. Առաջարկել համայնքների ղեկավարներին, հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն զինվորական կոմիսարիատի կողմից գորակոչիկներին հավաքակայան ներկայացնելու գրաֆիկի և անհատական ծանուցագրերի, ապահովել գորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

9. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետ, ոստիկանության մայոր Կ. Մանուկյանին՝ գորակոչային տեղամասերում ապահովել հասարակական կարգի պահպանությունը և կազմակերպել գորակոչից խուսափող գորակոչիկների որոնումներն ու նրանց պարտադիր ներկայանալը գորակոչային տեղամաս:

10. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի հրամանատար, ոստիկանության մայոր Ա. Պետրոսյանին՝ ապահովել գորակոչիկների անվտանգ փոխադրումը գորակոչային տեղամասերից հանրապետական հավաքակայան:

11. Սույն որոշման կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Նահապետյանի վրա:

12. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Հ. Հայրապետյանի վրա:

13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2017 թվականի նոյեմբերի 27  
ք. Հրազդան

  
Կ. ԳՈՒԼՈՅԱՆ